

ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ



ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդագրական վիճակագրության վերաբերյալ

Գործողություն 2.7. Միգրացիոն վիճակագրության մեթոդաբանություն և
Էլեկտրոնային տվյալների ինտենսիվ օգտագործում I

Առաքելության փորձագետներ

Տկն Դալիա Ամբրոզայտիենե, Լիտվայի վիճակագրություն
Պրն Յան Գոլուբովիչ, Լիտվայի վիճակագրություն

2017թ. փետրվարի 6–10

Վերջնական տարբերակ



ՀՀ ազգային վիճակագրության
ծառայություն



Փորձագետների կոնտակտային տվյալներ

Դալիա Ամբրոզայտիենե
Լիտվայի վիճակագրություն
Գեդիմինոյի պողոտա 29
Վիլնյուս, LT-01500
Լիտվա
Հեռ. +370 5 236 4815
Էլ-փոստ. dalia.ambrozaitiene@stat.gov.lt

Յան Գոլուբովիչ
Լիտվայի վիճակագրություն a
Գեդիմինոյի պողոտա 29
Վիլնյուս, LT-01500
Լիտվա
Հեռ. +370 5 236 4966
Էլ-փոստ. jan.golubovic@stat.gov.lt

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ.....	4
2. Գնահատում և արդյունքներ.....	5
3. Եզրակացություններ և առաջարկություններ.....	5
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք	11
Հավելված 2. Առաքելության ծրագիրը	13
Հավելված 3. Հանդիպումների մասնակիցներ.....	15

Հապավումների ցանկ

ԵՄ	Եվրոպական միություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Առաքելության վերաբերյալ սույն հաշվետվությունը պատրաստվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» Թվինինգ ծրագրի շրջանակներում: Մա երրորդ առաքելությունն էր 2-րդ բաղադրիչի շրջանակներում, և սույնի համար պլանավորված գործողություններն իրականացվեցին ինչպես նախատեսված էր.

Առաքելության նպատակն էր.

- Քննարկումներ տվյալների հավաքագրման և SS հարցերի անհրաժեշտ վերանայումների վերաբերյալ
- Մեթոդաբանության շարունակական վերանայում

Սպասվող արդյունքներ.

- Առաքելության հաշվետվություն տվյալների որակի բարելավման, մեթոդաբանության և առաջնային տվյալների աղբյուրների վերաբերյալ առաջարկություններով
- Միգրացիոն վիճակագրության գծով վերջին գործողության համար աշխատանքային ծրագիր
- Հետևել ձեռքբերումներին և առաջարկություններին՝ ԻՍՍՍ-ի և Լիտվայի վիճակագրության փորձագետների հաջորդ այցի համար

Առաքելության հիմնական նպատակն էր.

- Բարելավել միգրացիոն վիճակագրության մեթոդաբանությունը
- Քննարկել տեխնիկական մասնագրի պատրաստումը Հայաստանում միջազգային միգրացիայի վիճակագրության արտադրման համար Քննարկել տարբեր SS հիմնահարցեր
- Տրամադրել տեխնիկական աջակցություն և առաջարկություններ միգրացիայի վիճակագրության արտադրումը առավել արդյունավետ դարձնելու և այլ հարցերի վերաբերյալ

ԱԵ փորձագետները ցանկանում են իրենց անկեղծ շնորհակալությունն արտահայտել իրենց հետ հանդիպած բոլոր պաշտոնատար անձանց և անհատներին՝ բարի և արհեստավարժ աջակցության և արժեքավոր տեղեկատվության համար, որն ստացել են Հայաստանում իրենց գտնվելու ընթացքում, և ինչը մեծապես հեշտացրել է նրանց աշխատանքը: Սույն զեկույցում տեղ գտած տեսակետները և դիտարկումները պատկանում են փորձագետներին և կարող են չհամընկնել ԵՄ, ՀՀ ԱՎԾ, Իստատի կամ Դանիայի վիճակագրության տեսակետների հետ:

2. Գնահատում և արդյունքներ

Առաքելությունն ուղղված էր հետևյալ հիմնահարցերին. միգրացիայի վերաբերյալ վերջնական վիճակագրական տեղեկատվության և միգրացիայի վիճակագրության տարածման յուրաժամանակության բարելավում, SS բարելավումներ, որոնք անհրաժեշտ են միգրացիայի վիճակագրություն արտադրելու համար, միգրացիայի վիճակագրության մեթոդաբանության շարունակական վերանայում, տեխնիկական մասնագրի նախագծի պատրաստում՝ որպես կարևոր տեխնիկական փաստաթուղթ, որը պետք է կիրառեն ՀՀ ԱՎԾ երեք բաժիններ (մարդահամարի և ժողովրդագրության բաժին, տնային տնտեսությունների բաժին, և SS բաժին):

ՀՀ ԱՎԾ-ում միգրացիայի վիճակագրության արտադրման համար տվյալների հիմնական աղբյուրը ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտությունն է, որում ցպահանջ ավելացվել է միգրացիայի վերաբերյալ մոդուլը: Մա տարեկան ընտրանքային հետազոտություն է, որը տնային տնտեսությունների կենսապայմանների վերաբերյալ հիմնական տեղեկատվության հետ մեկտեղ հնարավորություն է տալիս հավաքագրելու տեղեկատվություն միգրանտների ժողովրդագրական և սոցիալ - տնտեսական բնութագրերի, տնային տնտեսություններից բացակայող անդամների, նրանց ընտանիքների համար դրամական փոխանցումների մասին: Հետազոտությունը հավաքագրում է վիճակագրական տվյալներ միգրացիայի երկու տեսակների վերաբերյալ՝ ներքին և արտաքին: ՀՀ ԱՎԾ ժողովրդագրության բաժնի և լիտվացի փորձագետների կողմից 2016թ. երկրորդ կեսին քննարկվել են միգրացիայի մոդուլային հարցաթերթի բարելավման հարցեր: Քննարկումներից հետո ՀՀ ԱՎԾ-ն հաշվի է առել առաջարկությունները հետազոտության հարցաթերթի ցպահանջ մոդուլի բարելավման վերաբերյալ: 2016թ. նոյեմբերին մարդահամարի և ժողովրդագրության բաժինը բարելավեց միգրացիոն մոդուլային հարցաթերթը 2017թ. տվյալների հավաքագրման համար՝ ըստ լիտվացի փորձագետների առաջարկությունների. մասնավորապես՝ ավելացվեցին քաղաքիության մասին նոր հարցեր, ՀՀ բոլոր բնակիչների վերաբերյալ միգրացիոն տվյալների հավաքագրում (նաև ընդգրկվեցին 0-14 տարեկան երեխաները, նախկինում 15 և ավելի բարձր տարիքի բնակչության փոխարեն); տվյալների հավաքագրում տնային տնտեսությունների անդամների բացակայության տևողության մասին միայն նախորդ տարվա ընթացքում (ներկայիս երեք տարվա ժամանակահատվածի փոխարեն): Առաքելության ընթացքում քննարկվեցին նոր հարցաթերթը և հնարավոր արդյունքները:

Քննարկվել է ՀՀ ԱՎԾ նոր «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու» հրապարակումը (հրապարակված 2016թ. նոյեմբերի 30-ին); մասնավորապես, «Միգրացիա» 7-րդ գլուխը: Փորձագետը նշեց վիճակագրական տեղեկատվության ներկայացման առաջընթացը: Հակառակ մի շարք ձեռքբերումների՝ դեռևս տեղ կա

բարելավումներ համար: Կարևոր է ներկայացնել հիմնական վիճակագրական տեղեկատվություն ՀՀ-ում միգրացիայի վերաբերյալ. հիմնական ցուցանիշներ, ներգաղթի/արտագաղթի ընդհանուր գործակիցները, զուտ միգրացիա, իրատեսական դինամիկ շարքեր և այլն: Գլխի սկզբում ներկայացված բացատրական նշումները, սահմանումները, վերլուծությունները հետագա բարելավման և մշակման կարիք ունեն: Աղյուսակների անունները, փոփոխականները պետք է համապատասխանեն եվրոպական օրնսդրությանը (Եվրոպական խորհրդարանի և խորհրդի (ԵՀ) թիվ 862/2007 կանոնակարգ համայնքի միգրացիայի և միջազգային պաշտպանության վերաբերյալ (այսուհետ ԵՄ թիվ 862/2007 կանոնակարգ) և բնակչության վիճակագրությանը: Հակառակ այն փաստին, որ հիմնական միգացիոն ցուցանիշները հաշվարկվում են տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունից, փոփոխականները պետք է վերանվանվեն, օրինակ՝ «տնային տնտեսությունների միգրացիոն գործընթացին մասնակցող անդամներ...»-ի փոխարեն առաջարկվում է օգտագործել «արտագաղթյալ, ներգաղթյալ» բառերը: Չկա վիճակագրական տեղեկատվություն տնային տնտեսությունների թվի, և տնային տնտեսությունների (տոկոսով) այն հատվածի մասին, որոնք ընտանիքի անդամներից դրամական փոխանցումներ են ստանում: Առաջարկվում է նախատեսել սույն տեղեկատվության հրապարակումը 2017թ.-ի և նախորդ տարվա համար:

Քննարկվեց միջազգային միգրացիայի արտադրման վերաբերյալ տեխնիկական մասնագրի նախագիծը: Անգլերեն թարգմանությունն ուղարկվել է փորձագետներին նախքան փետրվարի առաքելությունը և փորձագետներն ուղարկել են իրենց մեկնաբանությունները և առաջարկությունները տեխնիկական փաստաթղթի բարելավման համար: Քննարկվեցին մեկնաբանությունները Լիտվայի վիճակագրությունից: Մարդահամարի և ժողովրդագրության, ինչպես նաև SS բաժնի աշխատակիցները հաշվի են առել փորձագետների առաջարկությունները: Մասնագիրը ավարտին կհասցվի ապրիլի վերջին:

Քննարկվեց միգրացիայի համար մեթոդաբանության նախագիծը: Քանի որ մեթոդաբանությունը և մասնագիրն ունեն ընդհանուր կողմեր, երկու փաստաթղթերն էլ պետք է նախապատրաստվեն միաժամանակ (2017թ. ապրիլի 30-ին): Համաձայնեցվել է, որ ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի փորձագետները կաշխատեն միգրացիոն վիճակագրության մեթոդաբանության և մասնագրի վրա, և հաղորդակցությունը կշարունակվի էլ-փոստի միջոցով 2017թ. մարտ-ապրիլին:

Կազմակերպվեցին հանդիպումներ ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի հետ՝ դիտարկելու նրանց աշխատանքի ընթացքում SS գործիքների կիրառումը, ինչն ապահովվում է SS բաժնի կողմից: Կազմակերպվեց հանդիպում SS բաժնի հետ՝ դիտարկելու նրանց աշխատանքի առանձնահատկությունները մարդահամարի և ժողովրդագրական բաժնի համար գործիքներ պատրաստելու գծով:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

Հիմնական բացահայտումների հիման վրա եզրակացությունները և առաջարկություններն են.

1. 2017թ. հունվարից տվյալների հավաքագրումը տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության բարելավված միգրացիոն մոդուլով թույլ է տալիս արտադրել առավել բարձր որակի միգրացիոն վիճակագրություն, օրինակ միջազգային միգրանտների թվի գնահատումն ըստ քաղաքացիության և տարիքային խմբերի, համաձայն (ԵՀ) թիվ 862/2007 կանոնակարգի: Տնային տնտեսության անդամի բացակայության տևողությանը վերաբերող հարցը միգրացիոն փորձի վերաբերյալ միայն նախորդ տարվա համար (ընթացիկ 3 տարիների փոխարեն) կբարելավի հետազոտության արդյունքների ճշգրտությունը:
2. Քննարկվել է ՀՀ ԱՎԾ «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու» նոր հրապարակումը, մասնավորապես 7-րդ գլուխը: Ընթացքի մեջ է արդիականացված հրապարակումը. ՀՀ-ում միգրացիոն վիճակագրության արտադրման համար արտադրվող մեթատվյալները և սահմանումները, բացատրությունները, տվյալների աղբյուրները: 2017թ. համար հրապարակում նախապատրաստելու համար առաջարկվում են որոշ հստակեցումներ. օգտագործել միջազգային միգրացիայի և բնակչության վիճակագրության վերաբերյալ այն տերմինները, որոնք համապատասխանում են ԵՄ օրենսդրությանը; ներկայացնել առավել ընդհանուր տվյալներ միգրացիայի վերաբերյալ համապատասխան գլխում, չնայած այն փաստին, որ հրապարակման սկզբում կան մի քանի հիմնական ցուցանիշներ; բարելավել աղյուսակների անունները և փոփոխականները (օգտագործել միջազգայնորեն ներդաշնակեցված միգրացիոն վիճակագրական սահմանումներ): Փորձագետներն առաջարկեցին մշակել տարեկան հրապարակումները՝ առավել շատ վիճակագրական տվյալների ընդգրկմամբ (բացարձակ թվերով, տոկոսով, պատկերագրմամբ) արտագաղթյալների, ներգաղթյալների վերաբերյալ, իրենց հիմնական ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական բնութագրիչներով, ներգաղթի և արտագաղթի ընդհանուր գործակիցներով: Առաջարկվում է ավելացնել զուտ միգրացիայի և ընդհանուր գործակիցների սահմանումները հրապարակման բացատրական նշումներում:
3. Առաջարկվում է մոտ ապագայում նախատեսել հետագա զարգացումները միգրացիայի վիճակագրության տարածման մեջ. Պատրաստել և ՀՀ ԱՎԾ կայքում հրապարակել մեթատվյալների փաստաթուղթ (որակի հոչակագիր) միջազգային միգրացիայի վիճակագրության վերաբերյալ; հրապարակել միգրացիոն վիճակագրության որոշ ցուցանիշներ; միգրացիոն միտումներ, ապաստան, անկանոն միգրացիա և այլն: Միգրացիոն վիճակագրության սպառողների համար շատ հետաքրքիր և օգտակար կարող են լինել

օտարերկրյա աշխատանքային միգրանտների մասին տվյալները (որոնք հասանելի են ՀՀ ոստիկանության վիզաների և անձնագրային վարչությունում):

4. Առաջարկվում է վերլուծել տարեկան միգրացիոն վիճակագրությունն առավել վաղ հրապարակելու հնարավորությունները (եթե հնարավոր է, բարելավել յուրաժամանակությունը):
5. Չնայած այն փաստին, որ SS ԿԱՀ միգրացիոն մոդուլի մեջ կա «Դուք վերջին 12 ամիսներին դրամական փոխանցումներ եք կատարել կանխիկ թե՞ բնափրային տեսքով» հարցը, սակայն առաջարկվում է ուսումնասիրել ՀՀ կենտրոնական բանկի հետ համագործակցության հնարավորությունները դրամական փոխանցումների վերաբերյալ վիճակագրության գծով:
6. Առաջարկվում է մշակել մեթոդաբանություն միգրացիոն հոսքերը չափելու համար: Հնարավոր կլինի իրականացնել վերլուծություն և ստուգել տվյալները SS ԿԱՀ և բնակչության ռեգիստրի հետ մինչև ապրիլի վերջը:

SS բաժնի հետ համագործակցության վերաբերյալ հարցեր.

7. Մարդահամարի և ժողովրդագրության բաժնի և SS վարչության միջև հաղորդակցության չստանդարտացված ձևաչափը կարող է խնդիրներ առաջացնել տվյալների որակի մեջ: Առաջարկվում է առավել արդյունավետ համագործակցություն վիճակագրական բաժինների և SS վարչության միջև: ՀՀ ԱՎԾ-ում թվային տվյալների արտադրման հետ կապված առավել լավ աշխատանքի և արդյունքների համար առաջարկվում է ստանդարտացնել հաղորդակցությունը վիճակագրական և SS վարչության վիջև:
 - Մշակել ստանդարտացված խնդրագրեր՝ ռացիոնալացնելու տեխնիկական մասնագրերը;
 - Օգտագործել ստանդարտացված ձևեր, որպեսզի վիճակագրական հետազոտության ղեկավարները հստակորեն հաղորդակցվեն SS վարչության հետ;
 - Վիճակագրական բաժինների և SS վարչության հետ համագործակցությունը կարող է ձևակերպվել և հաստատվել ՀՀ ԱՎԾ ղեկավար մարմնի կողմից որպես ներքին փաստաթուղթ;
 - Հաստատվելու դեպքում տեխնիկական մասնագրերը կարող են օգտագործվել արտադրման գործընթացում թափանցիկություն և վերջնական վիճակագրական տեղեկատվության լավ որակ ապահովող միջոցներ:
8. Կարիք կա տեխնիկական մասնագրեր սահմանել մարդահամարի և ժողովրդագրության բաժնի կողմից օգտագործվող առկա համակարգերի համար, որոնք կարող են բարելավել արտադրված տվյալների որակը: Առաջարկվում է, որպեսզի առկա համակարգերի համար տեխնիկական մասնագրեր պատրաստվեն SS վարչության հետ խորհրդակցությամբ: Սա կօգնի հստակեցնել տվյալների արտադրման ընթացիկ գործընթացը և վերացնել

տվյալների թույլ որակի ռիսկը: Փաստաթղթի ձևով մասնագրեր ունենալը կկրճատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի, SS վարչության նոր աշխատակիցների հարմարվելու շրջանը:

9. ՀՀ ԱՎԾ աշխատակիցները շատ արհեստավարժ են և կարող են աշխատել վարչական տվյալների հետ անձնական տվյալների մակարդակով, բայց հաշվի առնելով վարչական տվյալների հետ առավել շատ աշխատելու կարիքը, SS աշխատակիցները կարող են գերձանրաբեռնվել, ինչը կարող է պատճառ հանդիսանալ ուշացումների և որակի անկման համար: Առավել մեծ ծավալի վարչական տվյալների օգտագործումը պահանջում է
- Առավել շատ SS մասնագետներ ունենալու հնարավորության գնահատում (ծրագրավորողներ);
 - SS մասնագետների համար MS Server –ի կառավարման և տվյալների հարցման գծով վերապատրաստում

Առաջարկվում է ներկայացնել համապատասխան գործիքներ նպատակաուղղված առավել լավորակ միջազգային միգրացիայի վիճակագրությանը: Դրանցից մի քանիսը արտացոլված են ստորև:

Գործողություն	Վերջնաժամկետ	Պատասխանատու անձ
Ավարտին հասցնել արդիականացված մեթոդաբանությունը միջազգային միգրացիայի վիճակագրության վերաբերյալ՝ համաձայն Լիտվայի վիճակագրությունից ստացված առաջարկությունների	2017թ. ապրիլի 28	Կարինե Կույումջյան
Ավարտին հասցնել միջազգային միգրացիայի վիճակագրության արտադրման համար տեխնիկական մասնագիրը՝ համագործակցելով SS վարչության և տնային տնտեսությունների հետազոտության բաժնի հետ	2017թ. ապրիլի 28	Կարինե Կույումջյան Արմինե Առուշանյան
Սահմանել համագործակցության համար ներքին գործընթաց SS վարչության հետ՝ տեխնիկական մասնագրերի կանոնանվոր մշակման և արդիականացման համար՝ հիմնված ստանդարտացված համագործակցության փաստաթղթի վրա	2017թ. մայիսի 31	SS վարչության պետ Արմինե Ավետիսյան
Պատրաստել և հրապարակել մեթատվյալների փաստաթուղթ	2017թ հունիսի 30	Կարինե Կույումջյան

միջազգային միգրացիայի վիճակագրության վերաբերյալ		
Մշակել փաստաթղթի նախագծային տարբերակ վիճակագրական բաժինների և ՏՏ վարչության միջև ստանդարտացված համագործակցության վերաբերյալ	2017թ մայիսի 31	ՏՏ վարչության պետ
Կազմակերպել բարձրաստիճան հանդիպում ՀՀ ազգային անվտանգության ծառայության հետ՝ քննարկելու համար սահմանային էլեկտրոնային կառավարման սեղեկատվական համակարգի անհրաժեշտ վարչական տվյալներին մուտքի թույլտվություն ստանալու հնարավորությունները և մոտավոր ժամանակացույցը	2017թ մայիսի 31	Կարինե Կույումջյան

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

<p style="text-align: center;">Տեխնիկական առաջադրանք</p> <p style="text-align: center;">ԵՄ Թվինինգ ծրագիր AM/14/ENP/ST/15</p> <p style="text-align: center;">2017թ. փետրվարի 6-10</p>
--

Բաղադրիչ 2. Ժողովրդագրական վիճակագրություն

Գործողություն 2.7 Միգրացիոն վիճակագրության մեթոդաբանությունը և էլեկտրոնային տվյալների ընդլայնված կիրառում II

0. Բաղադրիչի պարտադիր արդյունքները և չափանիշները

Պարտադիր արդյունքներ.

- Միգրացիոն վիճակագրության տվյալների հավաքագրման բարելավված մեխանիզմներ, ընդգրկվածություն, յուրաժամանակություն և որակ (2017թ. հուլիս)

Չափանիշներ.

- Միգրացիոն վիճակագրության արդիականացված մեթոդաբանություն (2017թ. ապրիլ)
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմը վերապատրաստվել է միգրացիոն վիճակագրության գծով (2017թ. հուլիս)

Գործողությաննպատակը

- Տվյալների հավաքագրման վերանայում և քննարկում անհրաժեշտ վերանայումների վերաբերյալ
- Մեթոդաբանության վերանայումը շարունակվում է
- Հանդիպում միգրացիոն վիճակագրության սպառողների հետ
- Քննարկումներում ներգրավել համապատասխան շահագրգիռ կողմերին

2. Գործողության սպասվող արդյունքը

- Նոր ընթացակարգերի իրականացում սահմանված տվյալների արտադրման համար
- Հանդիպում սպառողների հետ

- Հնարավոր մշակումներ և վերլուծություններ, որոնք պետք է հրապարակվեն/տրամադրվեն առավել համապատասխան սպառողներին
- Հետազոտության մեթոդաբանությունը վերանայված է
- Հաջորդ գործողության համար աշխատանքային ծրագիրը սահմանում
 - 2.8 Հետևել ձեռքբերումներին և առաջարկություններին ապագայի համար (2017 թ. հունիս)

Մասնակիցները

ՀՀ ԱՎԾ

Բաղադրիչի ղեկավարներ

- Պրն Գագիկ Գևորգյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Տկն Կարինե Կույունջյան, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ

Այլ աշխատակիցներ

- Տկն Աննա Թոխաթյան, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի գլխավոր մասնագետ
- Տկն Արմինե Ավետիսյան, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջատար մասնագետ
- Տկն Աննա Գրիգորյան, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջին կարգի մասնագետ
- Տկն Սուսաննա Ազատյան, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի երկրորդ կարգի մասնագետ

ԱԵ փորձագետներ

- Տկն Դավիթ Ամբրոզյան, փորձագետ, Լիտվայի վիճակագրության ծառայություն
- Պրն. Յան Գոլուբովիչ, փորձագետ, Լիտվայի վիճակագրության ծառայություն

Գործողությանը մասնակցող այլ շահագրգիռ կողմեր

Ներկայացուցիչներ.

- Միգրացիոն պետական ծառայությունից, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
- ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից
- ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից
- Միգրացիայի միջազգային կազմակերպությունից (ՄՄԿ)

նույնպես հրավիրվածներ կլինեն:

Հավելված 2 . Առաքելության ծրագիր

Ժամանակ	Վայր	Միջոցառում	Նպատակ/մանրամասներ
Երկուշաբթի, առավոտ (6/2) (10:00)	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Քննարկել շաբաթվա ծրագիրը Իրավիճակի գնահատում և անցած առաքելությունից հետո կատարված աշխատանքի ներկայացում ՇԵ կողմից և վերջինիս կողմից ընթացիկ առաքելության ակնկալվող արդյունքների ներկայացում:
Երկուշաբթի, կեսօրից հետո (6/2)	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Քննարկումներ, թե ինչպես սահմանել նոր ընթացակարգերի իրականացումը տվյալների արտադրման համար:
Երեքշաբթի, առավոտ (7/2)	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի և ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Հնարավոր մշակումների և վերլուծությունների քննարկում, որոնք պետք է հրապարակվեն/տրամադրվեն առավել համապատասխան սպառողներին:
Երեքշաբթի, կեսօրից հետո (7/2)	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում շահառուների հետ	Հանդիպում. - ՀՀ Ազգային անվտանգության ծառայության - Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) ներկայացուցիչների հետ
Չորեքշաբթի, առավոտ (8/2)	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Վերանայել՝ <ul style="list-style-type: none"> • Հետազոտության մեթոդաբանությունը, • Միգրացիոն հոսքերի տվյալների բազան
Չորեքշաբթի, կեսօրից հետո (8/2)	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում շահառուների հետ	Հանդիպում. - ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության - Միգրացիոն պետական ծառայության

<i>ներկայացուցիչների հետ</i>			
Հինգշաբթի, առավոտ (9/2)	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Եզրափակիչ քննարկումներ մեթոդաբանության և իրականացվելիք աշխատանքների շուրջ՝ ապահովելու համար արդիականացված մեթոդաբանությունն ապրիլի վերջին: Տնային աշխատանքի սահմանում, որը պետք է իրականացվի նախքան հունիս ամսին իրականացվելիք վերջին առաքելությունը:
Հինգշաբթի, կեսօրից հետո (9/2)	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ Չպլանավորված հանդիպումներ	Վեջնական պարզաբանումներ ՇԵ փորձագետների հետ, հաշվետվության պատրաստում և ներկայացում ՇԵ ծրագրի ղեկավարին
Ուրբաթ, առավոտ (10/2)	ՀՀ ԱՎԾ	Անփոփիչ հանդիպում ՇԵ ծրագրի ղեկավարի հետ	ԱԵ փորձագետների արդյունքների և ձեռքբերված եզրակացությունների ներկայացում Եզրակացություններ, որոշումներ և դրանց հետևանքները հաջորդգործողության համար և աշխատանքային ծրագիր ՇԵ փորձագետների համար:

Հավելված 3. Հանդիպումներին մասնակցած անձինք

ՀՀ ԱՎԾ.

- Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ
- Անահիտ Սաֆյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Գագիկ Գևորգյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Վանուշ Դավթյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Աիդա Մարտիրոսյան, տեղեկատվական ռեսուրսների, կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ
- Կարինե Կույումջյան, մարդահամարի և ժողովրդագրական բաժնի պետ
- Աննա Թոխաթյան, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի գլխավոր մասնագետ
- Արմինե Ավետիսյան, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջատար մասնագետ
- Աննա Գրիգորյան, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջին կարգի մասնագետ
- Սուսաննա Ազատյան, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի երկրորդ կարգի մասնագետ

ԹՄԽ թիմ.

- Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, ԹՎինինգ մշտական խորհրդատու
- Լիանա Աթոյան, ԹՄԽ օգնական
- Անուշ Պողոսյան, ԹՄԽ թարգմանիչ